բազոյր՝ որտեղի՞ց։ Երկար ժամանակ փնտրում են։

Վարազոյր չկայ։

Առաջին գիշերը, անկողիններիս մէջ կրծկըլուած, ամէնքս էլ խոր մտածումի մէջ էինք. արդեօք անձրեւը մեր վրայ պիտի կաթի՞ թէ չպիտի կաթի։

Չկաթեց։

* * *

— ... Հարեւաններս։

Դէպի բակ տանող նրբանցքի աջ կողմում նախկին թուրք տանտիրոջ կինը եւ իր տասը տարեկան զաւակը։ Ձախ կողմում, նոյնպէս թուրք մի կին, իր աղջիկը եւ ռուս մի չեկիստ։

Դէմ առ դէմ ապրող երկու այս թուրք ընտանիքները պատկանում են տարբեր սերունդների։

Նախկին տանտիրուհին բարձրահասակ, նիհար եւ խստադէմ մի կին է. գրեթէ ամբողջ օրը իր սենեակի մէջ փակուած։ Իր քայլուածքի եւ ձեւերի մէջ ինչ որ մի հանդիսաւոր բան կայ. բնական քաղաքավարութեան մի շեշտ, որ ինձ շատ դուր է գալիս։ Ինձ հետ խօսում է դրան ետեւից, ցած ձայնով, խոստովանանքի նման։

Երեւում է՝ շատ հաւատացեալ կին է։ Պատուհանից երբեմն տեսնում եմ, թէ ինչպէս առաւօտները, չոքած, կուրծքը միշտ բարձր, գլխին լայն լաթեր փաթաթած ու աչքերը յառած դէպի հեռուն, նա երկարօրէն աղօթում է։ Աղօթելու իր հանդիսաւոր այդ կերպը իմ մէջ արթնացնում է դեղագիտական հաճոյք եւ մի տեսակ պատկառանք։

Երբ նայում եմ, աչքիս առջեւ անմիջապէս լայնածաւալ անապատն է գալիս։ Թւում է ինձ, որ իր ձեւերը կապուած են լռակեաց եւ անդուլ աւազի եւ ցուլի արեան դոյն արշալոյսի հետ։ Մեռեալ ծովի մէջ նաւարկող մի հոգի։ Անաղմուկ, մտահայեաց եւ տխուր կին է, տիպական վերին ասիացանի, մի կտորից չինուած եւ իր բոլոր աւանդութիւնների հետ կապուած։

Տարիքը առած այս կինը ամուսին էլ ունի, սակայն, նա երբեք չի երեւում. որովհետեւ ասում են, ուրիշ ընտանիք եւս ունի։

Մէկը՝ Պարսկաստանում եւ երկու հատ՝ Երեւանում։

Մօրուքը ներկած, մորթէ գլխարկով, քաղաքավարի եւ լռակեաց մարդ է։ Երբեմն այցելութեան է գալիս, ծալապատիկ նստում եւ երկարօրէն խօսում։ Այդ ամէնը տեղի է ունենում շատ բնական կերպով, առանց աղմուկի եւ առանց վիճաբանութեան։ Երեւում է, որ ըստ իրենց կենցաղի, այդ դրութիւնը օրինաւոր է։

Դիմացի միւս թուրք ընտանիքի վրայ իրաւաղուրկ տանտիրուհին նայում է արհամարհանքով եւ գրեթէ երբեք նրանց հետ չի խօսում։ Այս կողմի աշխարհում դարաւոր կենցաղը ճեղքուած է եւ ինչ որ նոր մի մտայնութիւն նամազի վրայ աւազ է թափել։

Մայր եւ աղջիկ ու ռուս չեկիստ։

Մայրը դեռ երիտասարդ է՝ փափկիկ, կլորիկ եւ ժպիտը երեսին։ Աղջիկը, տասնվեց տարեկան է, բայց աւելին է ցոյց տալիս։ Թուրք մի ինչ որ դպրոցում ուսուցչուհի է եւ գեղեցկուհու համբաւ ունի, որովհետեւ անցեալ տարի մի հայ չեկիստ սիրահարուել է վրան ու իր կեանքին վերջ տուել։ Այդ մասին երդ էլ են կազմել եւ ամէն տեղ երգում են։

Ռուս չեկիստը աննշան դէմքով մի երիտասարդ է։ Ո՞վ է իմանում Ռուսաստանի ո՞ր ներքին գաւառներից եկել ընկել է այստեղ։ Կենակցում է մօր հետ։ Երբեք չի խօսում, գալիս ու գնում է շուքի նման։

«Ռուս չեկիստները,— ասում են բարեկամներս,— զգուշացիր, ամենավտանգաւորներն են։

Իսկ մեր եւ իր սենեակի մէջ թէպէտ դուռը փակ է, բայց ամէն ինչ լսում է։ Ո՞վ է իմանում, կարելի է մի ծակ էլ է գտել ու նայում է։

Զգուշանալու է։ Երէկ գիշեր նկատեցի, որ դիմացի միլիցիականներից ոմանք պատուհաններիս տակ պտտում էին...

— Իսկի էլ մի մտահոգուիր,— ասում է Սաթօն,— մեր իգդիրցի տղաներիցն են։ Մէկն էլ Վրացեանի նախկին թիկնապահն է։ Մեռնի՛ նա, գնացել բոլշեւիկ է դարձել...

Ու առիթից օգտուելով Սաթօն երկարօրէն պատմում է իրենց կորցրած տան եւ բաղի